# ՓՈԽԸՄԲՌՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

**Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի**
**և Չեխիայի Հանրապետության Մորավսկո-Սիլեզյան երկրամասի միջև**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզը և Չեխիայի Հանրապետության Մորավսկո-Սիլեզյան երկրամասը (այսուհետ՝ «Կողմեր»)

- հաշվի առնելով իրավահավասարության և փոխըմբռնման, հարգանքի և վստահության սկզբունքների հիման վրա երկկողմ հարաբերությունների զարգացման և ամրապնդման փոխադարձ հետաքրքրությունը,

- հարգելով և հասկանալով Կողմերից յուրաքանչյուրի մշակույթը,

համաձայնեցին շրջանների միջև ներքինիշյալ միջազգային կապերի ստեղծման վերաբերյալ.

1. Կողմերը կհաստատեն բարեկամական կապեր՝ կառավարման, տնտեսական, գյուղատնտեսության, մշակույթի, կրթության, զբոսաշրջության և սպորտի բնագավառներում փոխգործակցությունը զարգացնելու նպատակով:
2. Կողմերը կաջակցեն տեղական ինքնակառավարման մարմինների և քաղաքացիների փոխադարձ այցելություններին՝ շրջանների միջև համագործակցությունը ամրապնդելու նպատակով:
3. Օգտվելով շրջանների առանձնահատկություններից՝ Կողմերը կաջակցեն տնտեսական փոխգործակցությանը և գործարար կառույցների ակտիվությանը:
4. Սույն փաստաթուղթը իրավական պարտավորությունների, իրավակիրառման կամ Կողմերից յուրաքանչյուրի պարտավորությունների ձևավորման հիմք չի հանդիսանում:
5. Սույն Հուշագիրը կազմված է երկու օրինակից հայերեն, չեխերեն և ռուսերեն լեզուներով և ստորագրված է 2014թ հունվարի 31-ին Պրահայում:

| Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ | Չեխիայի Հանրապետության Մորավսկո-Սիլեզյան երկրամաս |
|---|---|
| Մարզպետ Աշոտ Ղահրամանյան | Հետման Միրոսլավ Նովակ |

**Меморандум о взаимопонимании**
**между**

**Армавирским марзом Республики Армения**
**и**
**Моравско-Силезским краем Чешской Республики**

Армавирский марз Республики Армения и Моравско-Силезский край Чешской Республики (далее – «Стороны»),

- учитывая взаимную заинтересованность в развитии и укреплении двухсторонних отношений на принципах равноправия и взаимопонимания, уважения и доверия;
- уважая и понимая культуру и традиции каждой из Сторон;

пришли к соглашению о формировании перечисленных ниже международных связей между регионами:

1. Стороны установят дружественные связи с целью поддержания взаимообмена в областях административного управления, экономики, сельского хозяйства, культуры, образования, туризма и спорта.
2. Стороны будут содействовать взаимным посещениям представителей органов самоуправления и гражданских лиц с целью укрепления сотрудничества между регионами.
3. Используя специфические особенности регионов, Стороны будут содействовать экономическому взаимообмену и активности бизнес-структур.
4. Настоящий документ не является предпосылкой для формирования юридических обязательств, правоприменения или обязанностей каждой из Сторон.
5. Настоящий Меморандум составлен в двух экземплярах на армянском, чешском и русском языке и подписан 31-го января 2014 г. в г.Праге.

| | |
|---|---|
| **Губернатор А.С.Каграманян** | **Гетман Мирослав Новак** |
| **Армавирский марз**<br>**Республика Армения** | **Моравско-Силезский край**<br>**Чешская Республика** |